ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 06 հուլիսի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 35-Ա

**ԷՄԻԼ ՍՈՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը, հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էմիլ Սոսի Գևորգյանի գիտության ոլորտում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումներն ու ակնառու նվաճումները, ինչպես նաև՝ միջազգային համագործակցության զարգացման գործընթացում արգասաբեր աշխատանքը և գիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ավանդը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էմիլ Սոսի Գևորգյանին ծննդյան 70-ամյա հոբելյանի կապակցությամբ շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի Ոսկե մեդալ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ